



«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կազմակերպմամբ Եւ Համայնքային համախմբման Եւ աջակցության կենտրոն ՀԿ-ի հետ համագործակցությամբ մարտի 2-ին Լոռու մարզի Թեղուտի մշակույթի տանը տեղի ունենացավ

հանդիպում` «Եղիր իրագեկ և պահանջատեր, պաշտպանիր քո շահերն ու իրավունքները ԱՃԹՆ հայաստանյան գործընթացում» թեմայով:

Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄՁԳ-ի (USAID) աջակցությամբ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն` հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Հանդիպման նպատակն էր Լոռու մարզի հանքարդյունաբերական ազդակիր համայնքների ՀԿ-ներին և բնակչությանն աջակցել` լիարժեք մասնակից դառնալու հանքարդյունաբերության ոլորտը թափանցիկ և հաշվետու դարձնելու ԱՃԹՆ հայաստանյան գործընթացներին:

Մասնակցում էին Համայնքային համախմբման Եւ աջակցության կենտրոն ՀԿ նախագահ Օլեգ Դուլգարյանը Եւ ծրագրերի համակարգող Անուշ Էվոյանը, փորձագետներ, Թեղուտի բնակիչներ Եւ ակտիվ քաղաքացիներ: Քննարկման ժամանակ ներկայացվեցին հանքարդյունաբերության հետեւանքով համայնքում առաջացած խնդիրների մեղմմանն ուղղված ծրագրային գաղափարներ: Առաջ քաշվեցին քաղաքացու իրավունքների վերաբերյալ հարցեր` հանքարդյունաբերական ընկերությանը Եւ ՀՀ կառավարությանն ուղղված հստակ պահանջատիրական պնդումներով:

